ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2591/02/24 ք. Երևան
10 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Վահագն Թորոսյանի, ծանոթանալով «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության ընդդեմ « ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն» ՝ Անվավեր ճանաչել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ արձանագրությունով «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ արձանագրությունով «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և

գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
Նույն օրենսգրքի 234.6. հոդվածի 1-3 մասերի համաձայն՝
1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
2. **Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:**
3. **Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:**
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200 և 361 հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ «Բոնուս Ասիստանս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. Պատասխանող՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունից պահանջել սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում դատարան ներկայացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ իր /պատասխանողի/ տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Վահագն Թորոսյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by TOROSYAN VAHAGN 2312720124
Date: 2024.04.10 17:55:30 AMT